



Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 28_L

29 հունիսի 2022 թվական

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻ ՇԱՐՔ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱԶՈՒԼՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 18-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 18-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հայ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի միաձուլման եղանակով վերակազմակերպումն ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և հայ նորագույն գրականության պատմության ամբիոնների հետ: Վերակազմակերպված ամբիոնները գործելու են հետևյալ անվանումներով.

- 1) Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոն,
- 2) Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ժամկետի (երկու ամիս) ավարտի հաջորդ օրվանից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

2022թ. հունիս «29»

Երևան